

ԻԶԵՎԱՆ-ՏԱՎՈՒԹԻ ԳՈՒՆԱԶԱՐԴ, ԴՐՎԱԳԱԾ ԵՎ ԴԱԶԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԻ ՄԱՍԻՆ

4. Մ. ԵՄԱՅԱՆ

Իջևան-Տավուշի միջնադարյան հուշարձաններից հայտնաբերված բազմաթիվ և բազմազան խեցեղեն նյութերի մեջ հանդիպում են եզակի ձևեր, որոնց թիվը չի անցնում մի քանի տասնյակից: Դրանց մեջ առանձնանում են գունազարդ, դրվագած և դաջազարդ անոթները: Պեղված հուշարձանների նյութերի մեջ գունազարդ անոթներ գտնվել են միայն չորս վայրից:

Այդպիսի եղանակով նախազարդված առաջին անոթը հայտնաբերվել է Իջևանի շրջանի Սարի գյուղի մոտ գտնվող 12-13-րդ դդ. թվագրվող Սարի-բաշ բնակավայրից: Այն իրենից ներկայացնում է բաց դեղնավուն անգորով ծածկված մի փոքրիկ մեկկանթանի սափոր, որի վզի տակով անցնում են կարմիր ներկով լցված սկավառակներ և ուղիղ գծեր:

12-13-րդ դդ. թվագրվող գունազարդ անոթների բեկորներ ավելի շատ գտնվել են Ծակեղցի բնակավայրից: Այստեղ գունազարդումը բաժանվում է երկու խմբի: Առաջին խմբին են վերաբերում երեք ոչ մեծ կարմիր անգորապատ կճուճների և մեկ թասի բեկորները: Կճուճների արտաքին կարմիր ֆոնի վրա սև ներկով արված են ձգված ձվաձև, կլորավուն և լայն հորիզոնական և թեք նախշեր: Թասի ներքին մակերեսի վրա նույնպես սև ներկով արված են տձև նախշեր, որոնք ինչ-որ ձևով հիշեցնում են խիստ ոճավորված կենդանիների պոչերի (կտրվածքի վրա չեն պահպանվել մարմինները) պատկերներ:

Երկրորդ խումբը ներկայացված է դեղնավուն խոշոր կճուճների կամ փոքր կարասների իրանների բեկորներով, որոնք զարդարված են մուգ շագանակագույն կամ սև ներկով լրցված լայն ժապավեններով: Հանդիպում են անոթների առանձին հատվածները զարդարող կարճ, լայն ժապավեններ, որոնց մի մասը ավարտվում է սրածայր հատվածներով: Ավելի փոքր անոթների բեկորների վրա հանդիպում են մեղ ժապավեններ, որոնք, ինչպես և լայները, ըստ երևույթին, անցնում են անոթների ամբողջ շրջագծով: Նման գունազարդ անոթների բեկորներ հայտնի են նաև Տավուշի շրջանի Տավուշ և Այգեձոր գյուղերի մոտ գտնվող Աղջկա բերդ ամրոցներից, որոնք այժի են ընկնում նախշերի ավելի մեծ բազմազանությամբ:

Տավուշ ամրոցում դրանք հանդիպում են ստորին բերդի երեք պեղավայրերում: Առաջին՝ պալատական եկեղեցու շրջակայքում պեղած նյութերի մեջ գտնվեցին 8 խոշոր անոթների իրանի բեկորներ, որոնց բաց դեղնավուն անգորով ծածկված մակերեսը հարդարված է սև ներկով լրցված խոշոր սկավառակներով (տրամագիծը՝ 2,3 սմ) կամ ավելի փոքր (տրամագիծը՝ 1,3 սմ), իրար մոտ գտնվող գույգ ման սկավառակներով: Տավուշ ամրոցի երկրորդ պեղավայրից գտնված գունազարդ անոթները այժի են ընկնում ավելի բազմազան նախազարդումով: Այստեղ գունազարդ անոթները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբին են պատկանում տարբեր կճուճների և սափորների բեկորները, որոնց կարմրավուն կամ դեղնավուն անգորապատ մակերեսները զարդարված են սև կամ մուգ շագանակագույն, երբեմն կարմիր ներկով արված նախշերով, որոնք հիմնականում զարդարում են անոթների իրանի կենտրոնական մասերը: Միայն մեկ դեպքում լայնաբերան կճուճի շուրթի տակով անցնում է լայն, սև ներկով արված գոտի: Մյուս դեպքերում անոթների իրանների վերին հատվածները զարդարված են ուղղահայաց, հորիզոնական, թեք, լայն կամ մեղ գոտիներով:

Գունազարդ անոթների երկրորդ խումբը այստեղ ներկայացված է մուրթ խեցի ունեցող բաց շագանակագույն մեկ անոթի բեկորով, որը զարդարված է սև ներկով լրցված փոքրիկ սկավառակով, ուղղահայաց մեղ գոտիով և չորս շրջանակներով: Այս շրջանակները կազմված են գույգ գծերից. արտաքին գիծը կատարված է կարմիր ներկով, իսկ ներքինը՝ սև: Մեկ գունազարդ անոթ գտնվել է նաև Տավուշ ամրոցի երրորդ պեղավայրից: Այն իրենից ներկայացնում է մեղ, դեպի վեր ձգվող սափոր (վիզը և շուրթը

չեն պահպանվել), որը ծածկված է բաց կարմրավուն անգորով: Անոթի կենտրոնական մասը զարդարված է սև ներկով արված երկու զուգահեռ թեք, կարճ ժապավեններով:

Այգեձորի Աղջկա բերդ ամրոցի միջնաբերդից գտնված գունազարդ անոթները հիմնականում կրկնում են Տավուշ ամրոցի երկրորդ տեղամասի նյութերի գունազարդման ձևերը: Այստեղի գունազարդ անոթները նույնպես բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի անոթների մախշազարդը բաժանվում է երկու տարբերակի: Առաջինի անոթները ներկայացված են գորշ, խոշոր կճուճների իրանների բեկորներով, որոնք զարդարված են ձվաձև փոսիկներով և հյուսածո մախշերով հարդարված ուտուցիկ գոտիներով: Գոտիների վրայով անցնում են կարմիր ներկով արված լայն հորիզոնական ժապավեններ, որոնք միանում են իրար նույն կարմիր ներկով արված ուղղահայաց գծերով: Այս խմբի երկրորդ տարբերակի անոթները ներկայացված են բաց դեղնավուն անգորով ծածկված խոշոր անոթների իրանների բեկորներով, որոնց վրա սև ներկով արված են թեք, լայն ժապավեններ և մի դեպքում՝ ուղղահայաց երկու զուգահեռ գծեր: Այս խմբի անոթների մեջ կա մի փոքրիկ բաց կարմրավուն անգորով ծածկված սափորի նեղ վզի բեկոր, որի արտաքին լայն մակերեսը զարդարված է մուգ կարմիր ներկով կատարված թեք գծիկներով, որոնք ստորին մասում միանում են մեկ ավելի լայն գծով:

Այգեձորի Աղջկա բերդ ամրոցի միջնաբերդից գտնված գունազարդ անոթների երկրորդ խումբը ներկայացված է մեկ նրբախեցի անոթի խոշոր բեկորով: Այն ծածկված է բաց շագանակագույն անգորով, որի վրա սև ներկով արված են ուղղահայաց նեղ ու այլքաձև գծեր և նույն ներկով լցված փոքրիկ շրջանակներ: Բացի նշված մախշերից, այստեղ, ինչպես և Տավուշ ամրոցի երկրորդ տեղամասում գտնված մեծ անոթի բեկորի վրա արված են գույզ գծերից կազմված շրջանակներ, որոնցից արտաքինը ներկված է կարմիր, իսկ ներքինը սև գույնով:

Ինչպես տեսնում ենք, վերը նկարագրված նյութերից Իջևան-Տավուշի 12-13-րդ դդ. թվագրվող խեցեղենի մեջ որոշակի տեղ են գրավում գունազարդ անոթները: Որքան մեզ հայտնի է մասնագիտական գրականությունից, մեծ մախշազարդման ձևեր քիչ են հանդիպում Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում: Ա. Ա. Քալանթարյանը միայն նշում է, որ Դվինի 9-13-րդ դդ. հասարակ խեցեղենի մախշազարդման ձևերի մեջ առկա է եղել նաև գունազարդման եղանակը¹: Եզակի դեպքերում գունազարդումը հանդիպում է նաև Օրեն-Կալայի 11-13-րդ դդ. խեցեղեն նյութերի մեջ: Այսպես, այստեղ գտնված մեկ չորսկանթանի կճուճ-կաթսայի եզրը զարդարված է կարմիր ներկով: Մյուս դեպքում երկու ոչ մեծ սափորների իրանները զարդարված են կարմիր ներկով արված ուղղահայաց ժապավեններով²:

Վերը նշվածը թույլ է տալիս ենթադրել, որ Իջևան-Տավուշի 12-13-րդ դդ. խեցեղեն նյութերի մեջ համեմատաբար լայնորեն օգտագործվել է անոթների գունազարդման տեխնիկան, ինչը անկասկած Դվինի արտադրության ազդեցության արդյունք է:

Իջևան-Տավուշի 11-13-րդ դդ. հասարակ խեցեղենի շարքում երբեմն հանդիպում են նաև դրվագված անոթների բեկորներ: Այսպես, Տավուշ ամրոցի հետախուզական փոսորակի երրորդ շինարարական հորիզոնի վերին հատվածում գտնվեց սափորի կլորավուն կանթ, որի վրա կապույտ ջնարակած անոթի ջարդոնով արված են կլորավուն դրվագումներ: Տավուշ ամրոցի ստորին բերդի պեղավայրի պեղումների ժամանակ այլ նյութերի հետ գտնվել է նաև մեկկանթանի սափորի կանթի բեկոր, որի վերին մասում երևում են փիրուզագույն ջնարակած անոթի բեկորներից դրվագած ներդիրներ: Նման դրվագումով անոթներ եզակի են հանդիպում: Այսպես, նույնատիպ հարդարում ունի Անբերդից գտնված դաջազարդ կարասը³. այսպիսի հարդարանք հայտնի է նաև Օրեն-Կալայից գտնված խուփերի բեկորների և իրանի վրա, ինչպես նաև կճուճների վերին մասերում: Սակայն այստեղ դրվագումը կատարվել է փիրուզագույն հախճապակու բեկորների միջոցով: Նման դրվագումով կարասներ հայտնի են Գանձակից, որոնք հանդիպում են 12-րդ դ. ոչ շուտ: Փիրուզագույն խեցեղենի բեկորներով դրվագված մախշազարդում հանդիպում է նաև Օրեն-Կալայից և Գանձակից⁴ գտնված դաջազարդ խեցեղենի վրա:

Իջևան-Տավուշի խեցանոթների մյուս խումբը դաջազարդ խեցեղենն է: Ելնելով մեր նյութերի որոշմազարդերից⁵ կարելի է արձանագրել կլոր, եռանկյունաձև և զլանաձև դրոշմիչների կիրառումը: Հայաստանում ամենատարածվածը եղել է զլանաձև դրոշմիչը, որով արվել են ինչպես զուտ երկրաչափական և բուսական, այնպես էլ կոմպոզիցիոն պատկերներով գոտիներ: Դրանց վրա հաճախակի

¹ Տե՛ս Ա. Ա. Калантарян, Средневековый город Двин, Автореферат докторской диссертации, Ереван, 1990, էջ 32:

² Տե՛ս Գ. Մ. Ахмедов, Неполитивная керамика Орен-Кала IX-XIII вв., в книге "Материалы и исследования Археологии СССР", М.-Л., 1959, էջ 199, 212:

³ Տե՛ս Ս. Վ. Հարությունյան, Անբերդ, Երևան, 1978, էջ 98:

⁴ Տե՛ս Գ. Մ. Ахмедов, նշվ. աշխ., էջ 190, 192, 198, 208:

հանդիպում են կենաց ծառերի, թռչունների, այծերի, շների, ձկան, վարազի, ուղտի, մարդու և այլ պատկերներ: Կարևոր է նշված պատկերների կոմպոզիցիոն գույնակցումը, որը հնարավորություն է տալիս խոսելու տարբեր վայրերում գտնված անոթների զարդանախշման մոտիվների ընդհանրության կամ տարբերության մասին:

Մեր կողմից ուսումնասիրվող տարածաշրջանում դաջազարդ խեցեղենը հայտնի է երեք հուշարձաններից՝ Մակարավանքից, Տավուշ և Այգեծոր գյուղի մոտ գտնվող Աղջկա բերդ ամրոցներից:

Մակարավանքում գտնված նյութերը ներկայացված են չորս տարբեր անոթների բեկորներով: Բոլորի նախազարդումը, բացի մեկից, կատարված է զլանաձև դրոշմիչով: Դրանցից մեկը կարմիր անգոթապատ անոթի իրանի բեկոր է: Այն հարդարված է երկու ուռուցիկ գծերից բաղկացած դաջազարդից՝ լցված բազմաշար, միմյանց հաջորդող ձվաձև զարդանախշերով, որոնց մեջ տեղադրված են կլորավուն շրջանակներ: Մյուս բեկորը կարմիր անգոթապատ սափորի պարանոց է: Շուրթը կլոր է, ներճկված: Պարանոցը հարդարված է խոր ներճկված սեպաձև զարդանախշով և ուռուցիկ հորիզոնական գծերով: Իրանի վերին մասով, ամմիջապես պարանոցի տակով, անցնում են կլոր դրոշմազարդով կատարված սեպաձև սեղմվածքներից կազմված հինգ վարդյակներ: Երրորդ բեկորը ներկայացնում է մի այլ անոթի պարանոց, որն ունի դուրս ճկված շուրթ, իսկ տակով անցնում է ուռուցիկ գոտի՝ հարդարված գծիկներով, ոչ խորը օվալաձև փոսիկներով, որոնցից ներքև, կարմիր անգոթապատ մակերեսի վրա, անցնում է նեղ կաթնագույն գոտի: Վերջին բեկորը ներկայացնում է անոթի կանթը և շուրթի մի փոքրիկ մասը: Շուրթը թեքված է դեպի ներս, կանթը հարդարված է տափակ ելուստով և կլոր փոսիկով: Բեկորը պատված է փայլուն անգոթով և պատկանում է Հայաստանի դաջազարդ կարասների խմբին:

Ուսումնասիրվող տարածքում դաջազարդ խեցեղենի բեկորներ ավելի շատ հայտնի են Տավուշ ամրոցի առաջին և երկրորդ տեղամասի պեղումներից: Առաջին տեղամասի գտածոները պատկանում են դաջազարդ հանդիսական խեցեղենի խմբին: Այն ներկայացված է բարձր որակի կարմիր անգոթապատ կարասների 28 բեկորներով, որոնցից 7-ը զարդանախշված են տարբեր պատկերներով՝ կատարված զլանաձև (մեկ դեպքում՝ կլոր) դրոշմիչներով: Այս բեկորներից երկուսը հարդարված են երկրաչափական զարդերով՝ կրկնակի օղակներով, բազմաշար թեք գծիկներով, սեղանաձև և շեղանկյուն նախշերով: Ավելի բարդ պատկերներով են հարդարված մյուս բեկորները: Բեկորներից մեկի վրա պատկերված է երեքճյուղանի կենաց ծառ, որի երկու կողմերում հանգիստ դիրքով կանգնած են երկու խոշոր թռչուն: Պարզ ընդգծված են կլոր աչքերը, թևերը և կատարները: Աջ թռչունի մեջքին կանգնած է մի ավելի խոշոր թռչուն, ոչ մեծ գլխով և շքեղ պոչով, որը, չնայած նկարի ոճավորմանը, հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այն սիրամարգ է: Չափ կողմի թռչունի վերևում օձ է պատկերված, իսկ նրա հետևում, հակառակ դիրքով, կանգնած է մի այլ թռչուն, որից կտրվածքի վրա պահանվել է միայն բացի տեսք ունեցող գլուխը: Ծառի և թռչունների միջև տարածքը լցված է բազմաթիվ օղակաձև նախշերով: Երկրորդ բեկորի զարդանախշը պատկերում է աջ կողմում կենաց ծառի վերին մասը և նրա առջև կանգնած սիրամարգ: Բեկորի ձախ կողմում պահպանվել է սիրամարգին մեջքով կանգնած ինչ-որ կենդանու (այծի՝) հետևի ոտքերը՝ վեր ցցված կարճ պոչով: Սիրամարգի և կենդանու միջև կլոր դրոշմիչով կատարված է ինը թեփուկավոր վարդյակ: Երրորդ բեկորը ունի ավելի բարդ սյուժե՝ կազմված երկու գոտիներից: Վերինը հակառակ դիրքով (գլուխը ներքև), երախը բաց ինչ-որ մի գիշատիչ կենդանի է (պահպանվել է մարմնի առաջամասը)՝ հենված առաջին ոտքերի վրա: Գլխի տակ և մեջքի վրա տեղադրված են երեքական օղակաձև նախշեր: Նրանցից 1 սմ ներքև անցնում է երկրորդ գոտին, որի վրա պահպանվել է յոթճյուղանի կենաց ծառի պատկեր, որի առջև, աջ կողմից, կանգնած է այծ, իսկ մեջքին կան երեք օղակաձև նախշեր: Այծի հետևից երևում է նրան հետապնդող (վերին պատկերին նման) կենդանու գլուխը: Չորրորդ բեկորի վրա պատկերված է գլուխը վեր պահած այծ, որի բերանը քիչ բաց է, իսկ աչքը կլոր օղակով ընդգծված է: Կենդանու առջև կանգնած է գլուխը բարձր պահած, կտուցը լայն բացած մի փոքրիկ ճուտիկ: Վերջին՝ հինգերորդ բեկորի վրա պահպանվել է ականջները ցցած, պոչը մեջքին կորացրած, երախը բաց կանգնած շան պատկեր: Կենդանու գլխի տակ, մեջքի վրա և հետևում տեղադրված են հինգ փոքրիկ շրջանակներ:

Երկրորդ պեղմասից գտնված դաջազարդ խեցեղենը ներկայացված է 9 տարբեր անոթների բեկորներով, որոնցից միայն չորսի վրա կան պատկերներ՝ կատարված զլանաձև դրոշմիչով (մի դեպքում՝ նաև կլոր): Նշված չորս բեկորներից երկուսը հարդարված են երկրաչափական նախշերով: Դրանցից մեկը զարդարված է հորիզոնական մեղ գոտիով լցված իրար հաջորդող շեղանկյուններով: Ենթանկյունների ներքին տարածքը լցված է չորսական մանր շրջանակներով: Մյուս բեկորի վրա պատկերված է նույն զարդանախշը, բայց ոչ թե հորիզոնական, այլ կիսակլոր դիրքով: Սակայն սա կատարված է ուրիշ

դրոշմիչով, քանի որ շեղանկյունների ներքը լցված են ոչ թե շորս, այլ մեկական փոքրիկ շրջանակներով: Երրորդ բեկորը զարդարված է բարդ գծերով, որոնք երևակայության դեպքում կարելի է նմանեցնել ամոթի դիրքին հակառակ պատկերված, ոտքերը դեպի վեր, գլուխը ներքև ուղղված խիստ ոճավորված շան պատկեր: Վերջին՝ չորրորդ բեկորը, հարդարված է երկու գոտիներով (վերին գոտու վրա ուղղահայաց դիրքով պատկերված է գլուխը դեպի ներքև ուղղած, հանգիստ դիրքով, պոչը լայն բացած մի սիրամարգ): Մեջքի վրա, պոչի տակ և հետմաստում արված են փոքրիկ շրջանակներ: Սիրամարգերից վերև կլոր դրոշմիչով արված է ինը թեփուկավոր վարդյակ, որի յուրաքանչյուր թեփուկի վերին մասում տեղադրված է մեկական շրջանակ: Այս պատկերից ստորև անցնում է լայն գոտի՝ զարդարված իրար հաջորդող շեղանկյուններով, որոնց կենտրոններում տեղադրված է մեկական շրջանակ: Այս մախչազարդը նման է վերը նկարագրված երկրաչափական մախչաձևին, բայց արված է ուլիչ դրոշմիչով, քանի որ շեղանկյունները ունեն ավելի մեծ չափեր:

Վերջին հուշարձանը, որտեղից գտնվել են դաջագարդ խեցեղենի բեկորներ, Այգեձոր գյուղի մոտ գտնվող Աղջկա բերդ ամրոցն է: Այստեղ միջնաբերդի պեղումներից գտնվեց 7 բեկոր, որոնցից չորսի վրա կան գլանաձև դրոշմիչով արված երկու երկրաչափական և երկու կենդանական պատկերներ:

Երկրաչափական մախչերով զարդարված առաջին բեկորի վրա արված են հորիզոնական դիրքով իրար հատող շրջանակներ, որոնց միացման տեղում ուղղահայաց դիրքով տեղադրված են մեկ ձվաձև մախչեր: Երկրաչափական մախչով բեկորի վրա մախչազարդումը արված է ոչ թե հորիզոնական դիրքով, այլ թեք կիսաշրջանի ձևով: Նախշերը կազմված են զագաթները իրար միացած շեղանկյուններից, որոնք երկու կողմից եզրագծված են բարակ գծերով: Բարդ կոմպոզիցիա ունի երրորդ բեկորը: Այստեղ պահպանվել է ճյուղերը դեպի ներքև ուղղված երկու կենց ծառի պատկեր, որի երկու կողմերում կանգնած է մեկական այծ (բեկորի ձախ կողմում՝ կտրվածքի վրա, երևում է միայն կենդանու պոխը): Կենդանիները ունեն խոշոր իրաններ, նեղ, երկար վզեր, երկու կեն եղջյուրներով զարդարված փոքրիկ գլուխներ: Մրանք մնել մյուսից անջատված են ուղղահայաց դիրքով կանգնած աստիճանաձև մախչով: Վերջին բեկորի վրա պահպանվել է անկյուններից կազմված մի երկրաչափական մախչի փոքրիկ կտոր, որից ստորև երևում է ինչ-որ կենդանու կանգնած պատկեր: Այն ունի հաստ, երկար իրան, կարճ պոչ: Նեղ վիզը ավարտվում է լայնացող, երկար ձգված գլխով: Դժվար է ասել, ինչ է այստեղ պատկերված, սակայն կարճ պոչը, ոտքերի դիրքը և հատկապես այն հանգամանքը, որ ոտքերը ավարտվում են ոչ մեծ երկատված տրակներով, հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այստեղ վարագ է պատկերված: Հայաստանի և Անդրկովկասի դրոշմագարդ խեցեղենի պատկերների կոմպոզիցիոն գույակցումը հիմնականում ներկայացված է հանգիստ կանգնած, իրար հետևից քայլող կամ վագող կենդանիների պատկերներով կամ կենց ծառի կողքերին հերալդիկ կանգնած կենդանիներով: Որոշ գոտիների վրա քայլող կենդանիները հերթափոխվում են թռչուններով: Այլ պատկերներում հերալդիկ դասավորված են միայն թռչունները: Հանդիպում են մարդկանց և այլ պատկերներ: Մեր նյութերը, ցավոք, խիստ բեկորային են, ինչը հնարավորություն չի տալիս խոսելու նրանց կոմպոզիցիոն գույակցման մասին: Միայն մի քանի օրինակների վրա դա մատանք երևում է: Այսպես, Տավոչ ամրոցի երկրորդ տեղամասից գտնված մի բեկորի վրա, ինչպես վերը նշվեց, պահպանվել է կենց ծառի մոտ կանգնած երկու թռչունների հերալդիկ պատկեր: Նույն տեղից գտնված մեկ այլ բեկորի վրա կենց ծառի կողքին (մյուս կողմը չի պահպանվել) պատկերված է այծ, որին հետապնդում է գիշատիչ կենդանի: Այգեձորի Աղջկա բերդ ամրոցից գտնված մեկ այլ բեկորի վրա կենց ծառերի երկու կողմերում կանգնած են երկու գույգ այծեր, որոնք բաժանվում են աստիճանաձև զարդով: Հետաքրքիր է կենդանիների և թռչունների տեսականին՝ այծ, վարագ, շուն, գիշատիչ (խիստ ոճավորված), սիրամարգ, քաղ, օձ:

Ինչպես տեսնում ենք, քննարկվող տարածաշրջանից գտնված դաջագարդ խեցեղենի պատկերները չեն տարբերվում Հայաստանում և Անդրկովկասում գտնվածներից և քնդհանուր մշակույթի արգասիք են: Անհրաժեշտ է նշել, որ նման խեցեղեղեր առաջին անգամ հայտնաբերվելով Անիում³, հետագայում գտնվեց Դվինից⁴, Գառնիից⁵, Անքերդից⁶, Գանձա-

³ Տես *И. Орбели*, Каталог Анийского музея древностей, СПб, 1910, էջ 125, նկ 25, *Г. Чубинов*, Декоративное убранство анийских карасов, Христианский Восток V, ПГр, 1917, ար. XIV-XXI, *Н. Я. Марр*, Ани, Москва-Ленинград, 1934, էջ 86-87, նկ. 192:

⁴ Տես *Կ. Գ. Ղափաճարյան*, Դվին քաղաքը և նրա պեղումները - I, Երևան, 1952, էջ 193-197, նկ. 166-169, 171:

⁵ Տես *Б. Н. Аракелян*, Гарни I, Ереван, 1951, նկ 64, *Բ. Ն. Առաքելյան*, Գ. Հ. Կարախանյան, Գառնի, 3-րդ ք., Երևան, 1962, էջ 78-89, նկ. 30-33, Հ. Լ. Պետրոսյան, Գառնի 9-14-րդ դար, Երևան, 1988, էջ 53-58:

⁶ Տես *Т. А. Измайлова*, Керамика из раскопок в Амберде, Труды отдела Востока Государственного Эрмитажа, IV, 1974, էջ 192; Տես *Ս. Վ. Հարությունյան*, Անքերդ, էջ 97-99:

կից⁹, Թբիլիսիից¹⁰, Օրեն-Կալիից¹¹, Դմանիսից¹², Ուրբնիսից¹³ և այլ վայրերից:

Այս անոթների թվագրման վերաբերյալ գոյություն ունի երկու կարծիք: Որոշ հեղինակներ այն թվագրում են ժամանակագրական տարբեր սահմաններով: Այսպես, Կ. Գ. Ղաֆադարյանը դրանք թվագրում է 9-12-րդ դարերով, Բ. Ն. Առաքելյանը՝ 10-13-րդ, Վ. Ջափարիձե՛ն, Տ. Տ. Իզմայլովան, Վ. Ն. Լևիտանովը և մյուսները՝ 12-13-րդ:

Պետք է նշել, որ, իրոք, դաջագարդ խեցեղենը Հայաստանում հանդես եկավ 9-րդ դարից սկսած, սակայն Հայաստանի և Անդրկովկասի հուշարձաններում այն հիմնականում հանդիպում է 12-13-րդ դդ. թվագրվող շերտերում: Նույնը կարելի է ասել նաև Իջևան-Տավուշի դաջագարդ խեցեղենի թվագրման վերաբերյալ: Այն հանդիպում է 12-13-րդ դդ. թվագրվող շերտերում: Սակայն այն հանգամանքը, որ Տավուշում և Այգեծորի Աղջկա բերդ ամրոցներում այն հանդես է գալիս շքաղյուսների և շքասալերի հետ միասին և այն, որ Աղջկա բերդ ամրոցում գտնվել է 14-րդ դդ. 30-40-ական թթ. թվագրվող Հուլավյան Աբու-Սալդին պատկանող դրամ¹⁴, կարելի է ասել, որ այստեղ դաջագարդ խեցեղենը հարատևել է նաև 14-րդ դարի առաջին կեսում:

Այժմ համառոտակի անդրադառնանք դաջագարդ խեցեղենի օգտագործման և գոտիների պատկերների նշանակության խնդրին: Այս կարասների օգտագործման մասին մասնագիտական գրականության մեջ գոյություն ունի երեք կարծիք. Լ. Մուսխելիշվիլու բնորոշմամբ դրանք ծառայել են գինու համար: Վ. Ն. Լևիտանովի կարծիքով դրանք օգտագործվել են հացահատիկ, սննդամթերք և ջուր պահելու համար: Գ. Հ. Կարախանյանը և ճրան հետևելով՝ Գ. Մ. Ախմեդովը, Հ. Լ. Պետրոսյանը և ուրիշներ գտնում են, որ այն օգտագործվել է խնջույքների ժամանակ:

Մեր կարծիքով ճիշտ են Գ. Հ. Կարախանյանը և ճրան հետևող Գ. Մ. Ախմեդովը, Հ. Լ. Պետրոսյանը և ուրիշներ, որոնք գտնում են, որ գինով լի նման կարասները գերակշիռ մեծամասնությամբ օգտագործվել են խնջույքների և տոնախմբությունների ժամանակ: Այս կարասները ուսումնասիրողները մանրամասնորեն քննարկել են դրանց վրա հանդիպող պատկերները՝ փորձելով պարզաբանել և իմաստավորել դրանք: Հետազոտողներից Գ. Չուքինովը գտնում էր, որ այդ պատկերները կրում են դադստանյան արվեստի ազդեցություն և խորթ են տեղական արվեստին: Թ. Արչլաձեն համարում է, որ այդ զարդերը լոկ դեկորատիվ տարրեր են և զուրկ են որևէ իմաստավորումից: Կ. Գ. Ղաֆադարյանը կարծում է, որ դրանց վրա պատկերված են որսի և խրախմանքի տեսարաններ, որոնք այնքան սիրված են եղել միջին դարերում: Հ. Լ. Պետրոսյանի կարծիքով այդ զարդերի հորինվածքները հիշեցնում են միջնադարյան էպիկական գրույցների, հեքիաթների և հատկապես առակների հետ ընկալվող պատկերները և ոչ թե հեթանոսական այլաբանական գրույցները: Հետազոտողների մի այլ մեծ խմբի կարծիքով այս պատկերները կարող են խորհրդանշել խոր հնությունից եկող պտղաբերության, առատության, երկնային զանազան երևույթներ¹⁵: Գ. Մ. Ախմեդովը նույնպես գտնում է, որ այդ պատկերների սիմվոլիկան տանում է հազարամյակների խորքը, բայց խիստ փոխվել են կերպարների իմաստավորումը և հաճախ առանձին զարդածեղեր, ինչպես «կենաց ծառը», որը դարձել է լոկ տեսարանի տարր: Ելնելով դրանից՝ նա գտնում է, որ այդ պատկերները հաղորդում են միջնադարյան վարպետներին հայտնի ինչ-որ իմաստներ, որոնք դժվար է մեկնաբանել:

Մեզ թվում է, որ այս խնդրի ուսումնասիրությունը պահանջում է ժամանակ և նոր նյութեր: Եղած նյութերի պարզաբանումից մեր կարծիքով ճիշտ է Գ. Հ. Կարախանյանի տեսակետը, որը շրացառելով նրանց սիմվոլիկայի խոր հնությունը իրավամբ եզրակացնում է, որ վերը նշված անդրկովկասյան հուշարձաններից գտնված օրինակները բացատրվում են ավելի շատ այդ քաղաքներում, հատկապես Գանձակում բնակվող հայերի սովոր գանձակածների արհեստավորական խավի առկայության արդյունքով¹⁶:

⁹ Տե՛ս *В. Н. Левитанов, Украшения на карасах из старой Гянджи. Баку, 1945, 8, էջ 50; И. М. Джафарзаде, Историко-археологический очерк старой Гянджи, Баку, 1949, էջ 72:*

¹⁰ Տե՛ս *В. Джапаридзе, Керамика XI-XIII вв. из Тбилиси, Вестник музея Грузии, XVI-В, 1950:*

¹¹ Տե՛ս *Г. М. Ахмедов, նշվ. աշխ., էջ 197-204:*

¹² Տե՛ս *Л. Мухелишвили, Раскопки в Дманиси. Советская археология, VI, 1940, էջ 282:*

¹³ Տե՛ս *Т. Д. Авчалдзе, К истории производства неполивной керамики в средневековой Грузии. "Дерги" из раскопок Кухетского Рустави, Археологические памятники феодальной Грузии, Тбилиси, 1969, к. 1, էջ 134-135:*

¹⁴ Տե՛ս *Հ. Ա. Եսայան, Տավուշ և Այգեծոր ամրոցների պեղումները և շքեղայունների հարցը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, N 1, էջ 168:*

¹⁵ *Բ. Ն. Առաքելյան, Ջաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 226, Ֆ. Ս. Բարսեղյան, Հայկական դրոշմագարդ կարասների տիպերը, «Լրաբեր», 1969, N 7, էջ 60-68, Նույնի, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդածեղերը, Երևան, 1981, էջ 33:*

¹⁶ Տե՛ս *Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 80-86:*

Г. С. Есяян - О расписной, инкрустированной и штампованной керамике Иджеван-Тавуша. Среди многочисленных находок керамического материала из средневековых крепостей и поселений Иджеван-Тавуша по форме орнаментации выделяются небольшие группы сравнительно редко встречающихся изделий. К их числу относятся сосуды: на красной и желтой ангобированной поверхности которых красными, черными и коричневыми красками нанесены кружочки, диски, широкие полосы и узкие линии. Подобная керамика происходит из крепостей и поселений Сари-Баш, Цакаегци, Тавуша и Айгедзорской крепости Ахчка-Берд. Эта редкая форма орнаментальных мотивов хорошо известна особенно из Двина. Вторую группу образуют инкрустированные сосуды, которые происходят из крепости Тавуш. Эта форма характерна инкрустированием ручек, шеек и отдельных частей туловов сосудов, фрагментами битой поливной керамики и фаянса голубого и синего цвета. Сосуды с подобной инкрустацией известны из Анберда, Орен-Кала и Гандзака.

Третью группу составляет штампованная керамика, известная из Макараванка, крепостей Тавуш и Ахчкаберд. Этот тип керамического производства хорошо известен по раскопкам Двина, Ани, Гарни, Анберда и других памятников Армении и Закавказья.

Новые материалы расширяют ареал производственного распространения этой керамики и частично дополняют ее орнаментацию новыми мотивами.